

նապէս և զործնականապէս չեն սովորցնում մանկական պարտիզի եղանակն: այդպիսի օրիորդաց ուսումնարանը չէ կարող համապատասխանել իւր նպատակին: Ո՞ր աղջկեր կարող է կրթութեամբ համարուել, որ ընդունակ չէ կրթութել իւր զաւակներին: Ո՞ր արհեստաւոր կարող է արհեստաւոր համարուել, որ ընդունակ չէ իւր արհեստն ուրիշին էլ սովորցնելու:

Որպէս զի ամեն մի օրիորդ կարող լինի ուսումնասիրել մանկական պարտիզը, պէտք է որ ամեն մի օրիորդաց ուսումնարանի նախապատրաստական դասատուները մանկական պարտիզ լինին: այն ժամանակ փոքրիկ աղջկին անձամբ կրթութելով մանկական պարտիզում և յետոյ վերջին դասարանում անցնելով մանկական պարտիզի տեսական մասը և վերջապէս զործնականապէս դասատուութեամբ պարապելով իրենց ուսումնարանի մանկական պարտիզում նա մեծ հեշտութեամբ ձեռք բերած կը լինի այդ «հայելիի ֆիգուրը»: որ ամենակարեւոր գիտութիւնն է նրա համար: Ուրեմն այդ նպատակին հասնելու համար հարկաւոր է մեր օրիորդաց ուսումնարանների ի բնէ կրթութեան անհամապատասխան նախապատրաստական դասարանները փոխել մանկական պարտիզների, որ մի շատ հեշտ գործ է: եթէ սկսելու համար ամեն մի օրիորդաց ուսումնարանի համար մէկ մանկական պարտիզականութիւն պատրաստած լինինք: Այդ գործին կարող են ձեռնարկել թիֆլիսում տիկին Սօփիա Բաշայեանցը, որ հմուտ է այդ գործին: իսկ Կ. Պօլսում տիկին Գայիանէ Մատակեանցը, որ այդ գործն երկար տարիներ ուսումնասիրում է: Ունենալով այդ երկու կենդրոնը՝ կարճ միջոցում կը տարածուի մանկական պարտիզի եղանակը և մեր օրիորդաց ուսումնարանները հասած կը լինին իրենց այդ կարեւոր նպատակին:

Մանկական պարտիզն ես ուսումնասիրեցի արտասահմանում իմ երեխաների համար, բայց հասկանալով զրա կարեւորութիւնը մեր մանուկների համար՝ աշխատեցի զրեւ մանկական պարտիզի տեսական մասը ձեռքիս տակ

ունենալով բարօնութիւն Բէրտա Մարէն Գօլց—Իլլոյի, Ապոլաւս Կէօլերի, Գլյօնի գիրքը և լատին դասախօսութիւնները:

Մանկական պարտիզի այս առաջին մասը պարունակում է տեսական բաժինը: Սկզբում զետեղել եմ պատմական մասը, որ շատ կարեւոր է, որպէս զի իմանան թէ ինչ գիտնականներ են աշխատել մանկական պարտիզի իրագործման համար և իւրաքանչիւրն ի՞նչ դադափարներ է յայտնել: Պատմական տեսութեանը հետեւում է Ֆրէօբելի կրթական վարդապետութիւնը:

Երկրորդ մասը կպարունակէ մանկական պարտիզի զործնական մասը այն է մաթեմատիկա և զեղարուեստ, որ Ֆրանսիերէնից թարգմանում եմ: Այս գործնական մասը աշխատասիրել են տիկին և պարօն Գլյօն:

Մնացած դասագրքերը, որոնք վերաբերում են բնագիտութեանց, երաժշտութեանը և ինչպէտք է թարգմանուին հետզհետէ:

(Շարունակելի),

ԲԺ. ԼԵՒՈՆ ՏԻԳԼԱՆԵԱՆ,



ԳՊՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԸՆԿԱՆ

ԿԱՆՈՆԵՐ:

(Սահմանում Հոլլանդական Ազգային Լուսարութեան Նախարարութիւնից):



ազայի Ազգային Լուսարութեան Նախարար՝ Բժշկապետ J. Th. Mouton - ի կարգադրութեամբ նորերս բոլոր քաղաքային դպրոցներին ուղարկուած է

հետեւեալ առողջապահական պատուէրները, որը կազմել են N. J. Bouvin, C. J. Z. Feith, J. H. M. Gerards, և J. G. J. von Oppenraah Բժշկապետները:

ԳՊՐՈՑԱԿԱՆ ԱՌՈՂՋ ԼՊԱՀՈՒԹԻՒՆ:

Ահանջէ Խնամարարութիւն.

1. Պէտք է զգոյշ պահել ականջները ամեն զօրեղ գրգռաներից՝ չխփել ականջին՝ ուղղակի ականջի մէջ չգոռալ:

2. Երբէք ականջը չխառնել սրածայր առարկաներով, ինչպէս են՝ գրիչը, քարեգրիչը՝ կամ գուլպայի ճաղը: Ականջը ոչնչով չպէտք է փակել, մինչև անգամ և բամբակով և մանաւանդ օգր-կօլանով կամ որևէ իւղով թաթախած բամբակով և այլ տեսակ այլ բանով:

3 Մտքրել ականջի խխուճը կամ ընդհանրապէս ահողջ արտաքին ականջը՝ որքան կարելի է աչքով տեսնել, բոյց մտքրելու ժամանակ զգուշութեամբ գործադրել օժառանգը: ականջը լուսնալուց յետոյ թաց մասերը բոլորովին և մեծ հոգատարութեամբ չորացնել:

4. Եթէ ականջիդ մէջ մի բան է ընկել, ոչինչ ինքդ մի անիլ, այլ որքան կարելի է շուտով բժշկի մօտ գնալ: Եթէ որևէ կենդանի զեւուռն է մօտէ՝ ականջիդ մէջ կաթ կաթ տաքացրած ձիթապօղի հիւթ կաթեցրու մինչև բժշկի գալը:

5. Եթէ ականջիդ շարու է հոսում, մրսքով չանցնես թէ դա «անվնաս է», և կամ թէ առաւել «օգտակար է», առողջութեան համար, ընդհակառակն որքան կարելի է շուտով զիմիր բժշկին:

Քիչ Խնամարարութիւն.

1. Քիթդ միշտ մաքուր պահիր: Միշտ միսքրդ պահիր, որ բերանը ուտելու և խօսելու համար է, իսկ քիթը՝ շնչելու*. եթէ քիթդ պիտի մաքրես (խնչել) քիթով այնպիսի ձայներ մի հանիր, որ կարծես փող ես փչում, այլ նախ մի մատը մաքրիր և ապա միւս մատը:

2. Եթէ որևէ պատճառով չես կարողա-

* Թէ քիթը և հոտառութեան համար է հոլանդական օրէնագիրը, յայնի չէ թէ ինչ պատճառով անօգուտ է համարել յիշեցնել մանուկներին և դաստիարակներին:

նում ամբողջ քիթով շունչ քաշել, օր մանգալու կամ վազելու, խօսելու կամ քնելու ժամանակ, դիմիւ բժշկին խնդրելով քեզ քննէ, իմանալու թէ պատճառն ի՞նչ է:

3. Անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել, որ մանուկները կեանքի հէնց առաջին ամիսներում սովորեն բերանը փակ պահել, եթէ մանուկն օրօրոցում պառկած է յետ գնացած գլխով և բաց բերանով, պէտք է բարձրն այնպէս յարմարեցնել, որ կզակը փոքր ինչ կպչէ կրճքին: Եթէ մի քանի շաբաթ անցնելուց յետոյ ոչինչ բարեփոխութիւն չընկատուեց՝ այսինքն, եթէ մանուկը դարձեալ շարունակում է բաց բերանով շունչ քաշել՝ պէտք է դիմել բժշկին:

Շնչառութեան Գործարարանքի Խնամարարութիւն.

1. Շնչիր բերանդ փակած:

2. Որքան կարելի է խուսափիր փոշոտ և ապականուած օդ ծծելուց, ինքդ էլ զգուշացիր դատարանում եղած ժամանակդ կամ փողոցով անցնելիս փոշու ամպեր բարձրացնելուց:

3. Երբէք ոչ թաշկենակի մէջ և ոչ էլ յատակի մրայ մի թրիր կամ խփիր:

4. Ամառը որչափ հնարաւոր է բաց պատուհանների մօտ պարտալիր, իսկ ձմեռը՝ լաւ եղանակին, օրէնր մի քանի անգամ սենեակի օդը փոխիր (քամհարի) թէ զոհները և թէ լուսամուտները բանալով:

5. Միջակի քամու առաջ մի նստիր, մանաւանդ երբ տաքացած ես:

6. Հոգ տար որ ննջարանիդ օդը կարելոյն չափ մաքուր և թարմ օդ ունենայ, մի մաւանար որ այդ տեղ ես անցնում կեանքիդ մեծ մասը, որ այդ տեղ ես հանգստանում օրական յօգնութիւնից և այնտեղ պիտի ժողովես նոր ոյժ հետեւեալ օրուայ համար:

7. Երբէք կուրծք կամ փորդ որևէ ամուր առարկայի գէմ մի տար:

Աչքերի Խնամարարութիւն.

1 Մութն ընկած ժամանակ կամ անբաւարար և վատ լուսաւորուած տեղում մի կարգաւ և ոչ էլ գրիր կամ տշխատիր:

2. Յերեկը պարագելու համար սենեակի մէջ պնդակի տեղ ընտրիր, որ լուսամուտը քս ձախ կողմն ընկնէ և որ երկնքի մի մասը տեսնել կարողանաս: Արեւի ճառագայթները յպէտք է քո աշխատանքի (տետրակի գրքի ևն.) վերայ ընկնեն:

3. Ճրագը ոչ մութ և ոչ խիստ գունաւոր լուսամկոտիով մի ծածկեր: Գիր փոքր ինչ դէպի ձախ կողմը և կէս մետրի չափ հեռաւորութեամբ: Խիստ վնաս է կարգաւ առկածող կամ երերուն լոյսի առաջ, ինչպէս և կառքում, երկաթուղում կամ անկողնում կարգաւոր: Այն ճրագը, որի մօտ կարգուեալ կամ աշխատում՝ պէտք է գլանաձև ապակի և յախճապակէ լուսամկոտի ունենայ:

4. Գրիր լաւ, սե թանաքով և աչքի ընկնող տողացոյցով: աշխատիր սովորել՝ գրել առանց գծերի որքան կարելի է արագ, տողացանցեր մի գործածիր:

5. Եթէ զգում ես, որ աչքերդ յոգնել են, աշխատութիւնդ դադարեցրու և մի առ ժամանակ լուսամուտից դուրս նայիր մինչև որ հանգստանաս*:

6. Մանր հիւանդութիւնից յետոյ, որքան կարելի է խնայիր աչքերիդ մի առ ժամանակ:

7. Եթէ աչքդ որևէ բան է ընկել, ոչ թէ աչքերդ շփիր, այլ զգուշութեամբ կոպր մատով դէպի քթի կողմը շփիր, եթէ դուրս չեկա՝ դիմիր բժշկին:

8. Եթէ լաւ չես տեսնում կամ աչքերդ ցաւում են, խորհուրդ հարցրու բժշկից. միայն նա կարող է վճռել թէ ակնոց պէտք է քեզ՝ թէ ոչ, կամ միշտ պէտք է կրես թէ կարգաւոր կամ գրելու ժամանակ և կամ ո՞ր համարն ամենից աւելի լաւ է գալիս քո աչքերին:

Տնային նորախան պարագելու և լուսամուտի լուսամուտը:

1. Լուսամուտը կամ լամպարը պէտք է քիչ ձախ կողմն ընկնեն:

*. Եթէ աչքը խիստ յոգնում է, առաւել լաւ է ստէպ - ստէպ սառը ջրով սրկել կոպերը և կամ լուացուիլ:

2. Գրելու ժամանակ ակնոցն այնպէս դիր, որ ակնոցի նստարանի յառաջամասը 2—5 հարիւրամետր սեղանի տակն ընկած լինի: Միև նոյն ժամանակ նստիր ուղածիգ և կուրծքդ հեռու սեղանի եզրից:

3. Աթոռի բարձրութիւնն այնպէս պէտք է լինի, որ արմուկներդ սեղանի մակերևոյթի բարձրութեանն հաւասար լինեն: Եթէ ակնոցը ցած է, (որ յաճախ է պատահում), այն ժամանակ նստարանի վերայ չափաւոր բարձրութեամբ մի բարձ կամ այլ բան դիր:

4. Ոտները պէտք է յատակի վերայ լինեն, իսկ եթէ չեն հասնում, այն ժամանակ ոտքերիդ տակ մի փոքրիկ ակնոցակ դիր և ոտքերդ էլ նորա վերայ:

5. Ոտքը - ոտքի վերայ դրած (ծունկը ծընկան վրայ կամ թաթը թաթի վրայ) մի նրտիր, նոյնպէս և ոտքերդ ակնոցի տակը մի դիր:

6. Կուրծքի երկու յառաջամասերը՝ մինչև արմուկներդ թող յենուած լինեն սեղանի վրայ, ձախ ձեռքով բռնիր թույթը և հետը հետէ գէպի վեր տար՝ որչափ որ գրութիւնը թղթի ստորին մասին է մօտենում:

8. Թույթը դիր ուղիղ կրծքիդ առաջ՝ փոքրը ինչ գէպի աջ:

9. Կարգաւոր ժամանակ ակնոց հեռացրու սեղանից և երկու ձեռքով ամուր բռնիր գիրքը փոքր ինչ թեք դրութեամբ, այնպէս որ նորա վերին եզրը աւելի բարձր լինի, քան ստորինը՝ որ յենուած պիտի լինի սեղանին:

9. Աչքի և տառերի միջի տարածութիւնը առնուազը պէտք է 32 հարիւրամետր լինի:

10. Աղջիկները պէտք է միշտ հոգան, որ նոցա վերնազգեստը ակնոցի նստարանի վերայ բոլորովին հաւասարաչափ կերպով ընկած լինի. դորա համար, ակնոցի վերայ նստելուց առաջ՝ աղջիկները պէտք է խուսափեն իրենց սովորութիւնից՝ վերնազգեստը ձեռքով այս կամ այն հաւաքելուց և ապա նստին:

Մարտի 2-ի համար խմբագրութիւն:

1. Թարմ օդն ու արեգակի լոյսը անհրա-

Ժեշտ են առողջութեան պահպանութեան և խնամածութեան համար: ուստի և ամեն կերպ պէտք է հոգ տանել որ բնակարաններն այդ բանից զուրկ չը լինին:

2. Աշխատիր ամեն օր ամբողջ մարմինդ կամ գոնէ մարմնի վերին մասը սառը ջրով լուսողով կաղզուրուել: Եթէ կարելի է գոնէ շաքաթը մի անգամ տաք ջրով լողացիր՝ մարմնի մաքրութեան համար:

3. Տարուայ տաք եղանակին լողացիր բայց օդում աղառ (ոչ պատասպարուած) ջրում: աւելի լաւ է եթէ արևի ջերմութիւնըն ընկած լինի մէջը: Տաք բոպէից աւելի մի մնար ջրի մէջ, ապա լաւ չոր սրբուիր և սկսիր զբօսել (բայց ոչ շատ նեղ զգեստներով) մարմինդ տաքացնելու համար: Եթէ կարելի է, հանգարտ և տաք եղանակին, լողանալուց յետոյ մի փոքր ժամանակ մնայ մերկանգամ՝ ենթարկուելով թարմ օդի և արևի ճառագայթների ազդեցութեան:

4. Բերանդ և որկորդ մաքուր պահիր՝ ամեն առաւօտ և ամեն երեկոյ, ինչպէս և իւրաքանչիւր անգամ ուտելուց յետոյ (ճաշին, նախաճաշին ևլն) լաւ ողողիր և մաքրիր:

5. Որքան կարելի է աշխատիր թարմ օդում բաւական շարժումներ անել:

6. Շատ տաք մի հագնուիր, գլուխդ շատ թեթեւ կերպով ծածկիր: իսկ պարանոցդ բոլորովին բաց պահիր:

7. Մարմնի ոչ մի մասը ամուր մի սղմիր (օր. գօտիով, զանգապանով, կոճկելով ևլն.):

8. Կոշկի, մաշկի և այլ օտնամանի կրունկն այնպիսի ձև պիտի ունենայ, որ քո ոտքիդ յարմարէ: Բարձր կրունկները վնասակար են. աւելի լաւ են լայն և ցածր կրունկները:

9. Երբէք թաց գուլպայով, կոշկով կամ այլ զգեստով չպէտք է մնալ. հանիր, որքան կարելի է շուտով և չորը հագիր:

10. Ուտելը և խմելը չափուոր պէտք է լինի. խուսափիր փշացան, փստ—մարսուող կերակրից, նոյնպէս և քաղցրեղեններից, մանաւանդ փոքրներին չպէտք է քաղցրաւենի:

ներ տալ. սովորիր պարզ կերակուր գործածել, օր. մեծ քանակութեամբ աղ, ոգելից ըմպելիքներ, ծխախոտ ևլն. հում միս և տրհաս պտուղներ չպէտք է ուտել:

11. Երեկոյեան կանուխ պառկիր քնելու և առաւօտն էլ կանուխ վեր կաց: Քնելուց առաջ որևէ ֆիզիքական կամ մտաւոր լարուած աշխատանքով մի վրդուիր գիշերային հանգստութիւնդ:

(Hamburger Fremden—Blatt 1893 № 295,

Դեկտ. 16). (Вѣст. Воспитанія):

Թարգ. Տ. Ս.



ՀԱՅԿԱԿԱՆՔ *



ԺԵ

որ. Պատմ. Ուսումնասիրութիւնս վերնագիրը կրող յօդուածներին շարքում (ե) առիթ եմ ունեցել առաջարկել մի սրբազրութիւն հետեւեալ հատուածում: ընախ խըժական ժառանգեցին յորջորջումն: Բիւրատ և Ս. Կ. (Բ. կգ): Սմբատ-ի փոխանակ առաջարկում էի կարգալ Տրդատ, հիմնուելով այն ժամանակ ինձ յայտնի միակ մի ձեռագրի ընթերցուածի վրայ (Սանահինի Ներսէս գրչի օրինակ): Պատճառաբանութիւնս աւելորդ է կրկնելը: Սանահինի օրինակը մեր դասաւորութեան Բ. է: Հետաքրքրական է իմանալ թէ որչափ է արդարանում այս կէտում առաջարկած դասաւորութիւնս: Զեռքումս եղած բոլոր ձեռագրերի այս կէտը քննելով՝ գտնում ենք. ամբողջ Բենն ունի ուղիղ ընթերցուած—Տրդատ, նոյն ուղիղ ընթերցուածն ունի և ամբողջ Այբը: Ուրեմն երկու խմբի բոլոր ձե-

*) Տես. նախընթաց համարը: